Ներդրումներ առևտրի ոլորտում

GEFF Green Economy Financing Facility

European Bank for Reconstruction and Development

ԱՌԵՎՏՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ՝ ԱՃԻ ԵՎ ՇԱՀՈՒԹԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ

GEFF-ի կանաչ ֆինանսավորման միջոցով ձեռք բերված բարձր արդյունավետությամբ տեխնոլոգիաները հավելյալ օգուտներ կբերեն Ձեր առևտրային բիզնեսին

Դոնորներ՝

GREEN CLIMATE FUND

CIF CLIMATE INVESTMENT FUNDS

Զբաղվում եք մեծածախ կամ մանրածախ առևտրո՞վ, վաճառում եք պարենային կամ ոչ պարենային ապրանքնե՞ր, աշխատում եք առցանց կամ ո՞չ: Ամեն դեպքում, Ձեր հաճախորդներն ակնկալում են ապրանքների պատշաճ որակ և մատակարարում: Այդ ամենն ապահովելու համար, Դուք կիրառում եք սարքավորումներ և համակարգեր Ձեր բիզնեսում, որոնք, իրենց հերթին, սպառում են էներգիա: Կանաչ ֆինանսավորումը կարող է ոչ միայն կրճատել էներգիայի սպառման ծախսերը, այլ նաև ավելացնել բիզնեսի մրցակցային առավելությունները՝ այդպիսով բարձրացնելով մրցունակությունն ու ամրապնդելով դիրքերը տեղական կամ միջազգային շուկաներում:

ՎԶԵԲ-ի Կանաչ տնտեսության ֆինանսավորման ծրագիրը (GEFF) արդեն իսկ ֆինանսավորել է 5 միլիարդ եվրոյի հասնող 202,000 էներգաարդյունավետ ու վերականգնվող էներգետիկայի նախագծեր: Այդ ներդրումների միջոցով տարեկան կրճատվել է ավելի քան 9 մլն տոննա ածխաթթու գազի արտանետում:

ՎԶԵԲ-ի կանաչ տնտեսության զարգացման մոտեցումն է՝ բարձր արդյունավետությամբ տեխնոլոգիաների և GEFF-ի ֆինանսավորման համադրումը տեղական մակարդակում:

Ինչո՞ւ ենք կարևորում բարձր արդյունավետությամբ տեխնոլոգիաներում ներդրումներ կատարելը:



Որո՞նք են առևտրի ոլորտում տարածված ներդրման ուղղությունները, որ հնարավոր է ֆինանսավորել GEFF-ի միջոցով:

Բարձր արդյունավետությամբ տեխնոլոգիաներ	Հետգնման ժամկետ*
Ջեռուցում, Օդորակում և Օդափոխություն (HVAC) Ջերմաստիճանի անցանկալի տատանումներն ավելացնում են ջեռուցման, հովացման, օդափոխման և օդորակման համար օգտագործվող էներգիայի ծախսերը: Իսկ ապրանքների որակի պահպանման նպատակով, անկախ նրանից օգտագործվում են առանձին սարքեր, թե սառնարանային համակարգեր, առաջ է գալիս բարձր արդյունավետության ու սպասարկման դյուրացման անհրաժեշտություն: Այս դեպքում կարելի է դիտարկել հետևյալ տեխնոլոգիաների կիրառումը՝ այդ համակարգերի արդյունավետությունը բարձրացնելու, առավել նպաստավոր միջավայր ստեղծելու և ծախսերը կառավարելու նպատակով:	• Օդորակման սպլիտ համակարգ՝ 5-6 տարի • Օդորակման VRF մուլտիսպլիտ համակարգ՝ 6-7 տարի • Կոնդենսացիոն կաթսա՝ 3-4 տարի • Ջեռուցման գազի կաթսա՝ 4-5 տարի • Ջեռուցման ջերմային պոմպեր՝ 6-7 տարի • Օդափոխության համակարգ՝ 5-6 տարի • Չիլեր ջրային հովացմամբ՝ 7-9 տարի • Չիլեր օդային հովացմամբ՝ 11-13 տարի
Ջերմամեկուսացում Շենքի բարձրորակ ջերմամեկուսացման միջոցով հնարավոր է խնայել գումարներ՝ ապահովելով ցանկալի ջերմաստիճան և խուսափելով ավելորդ ծախսերից: Այն պաշտպանում է ձեր շենքը, նպաստում է սարքերի բարձր արդյունավետությամբ շահագործմանն ու երկարակեցությանը՝ միաժամանակ նպաստելով աշխատակիցների առողջության պահպանմանը:	• Շենքի արտաքին պատերի ջերմամեկուսացում՝ 3-5 տարի • Ջերմամեկուսացում սկսած 50 մմ՝ 3-5 տարի • Պատուհանների և դռների ջերմամեկուսացում՝ 7-9 տարի

Բարձր արդյունավետությամբ տեխնոլոգիաներ	Հետգնման ժամկետ*
Արևային էներգիա Անկախ նրանից Դուք վարձակալում եք, թե հանդիսանում եք բիզնես տարածքի սեփականատերը, կարող եք մեծ օգուտներ ստանալ՝ օգտվելով տարեկան 2,500 ժամ արևային էներգիայից. այս ներդրումը կարող է ապահովել մինչև 25 տարի անվճար էներգիա:	• Ֆոտովոլտային համակարգեր՝ 6-7 տարի • Արևային ջրատաքացման համակարգեր՝ 7-8 տարի
Տրանսպորտային միջոցներ Փոքրածավալ, միևնույն ժամանակ բարձր արդյունավետությամբ տրանսպորտային միջոցները կարող են նպաստել գործառնական արդյունավետության բարելավմանը՝ միջին և մեծ առևտրային ընկերությունների համար:	• Հեղուկ գազով աշխատող բեռնիչներ՝ 7-9 տարի • Էլեկտրական բեռնիչներ՝ 9-11 տարի • Դիզելային բեռնիչներ՝ >15 տարի
Լուսավորություն Ճիշտ նախագծված լուսավորությունը կարող է ոչ միայն նպաստել վաճառքների աճին, այլ նաև ապահովել կգալի խնայողություն:	• LED լուսավորություն՝ 1-2 տարի • Բարձր ճնշման նատրիումային լամպեր՝ 1-2 տարի

* Հիմք ընդունելով 2019-2021թթ. գները:

Ստորև ներկայացված են GEFF-ի կողմից ֆինանսավորված երկու ներդրում՝

Ներդրման տեսակ՝	**Էքսկավատոր-ամբարձիչ New Holland B110B**	**Ֆոտովոլտային համակարգ 250 կՎտ**
Հաճախորդ՝	«Բիգ Փարթս» ՍՊԸ, Երևան	«Գեղեցկուհի Անահիտ» ՍՊԸ, Սևան
Բիզնեսի տեսակ՝	Շինարարական տեխնիկայի պահեստամասերի ներմուծում և վաճառք	Սուպերմարկետ, ֆուդ-քորթ
Նկարագրություն՝	Բարձր արդյունավետությամբ էքսկավատոր-ամբարձիչի ձեռքբերմամբ՝ ընկերության երկարաժամկետ գործունեությունը դառնում է ավելի հուսալի, ճկուն և ծախսարդյունավետ	Գեղարքունիքի մարզի ամենամեծ սուպերմարկետն այսուհետ կարող է արտադրել սեփական էներգիան՝ ընկերության համար ստեղծելով երկարաժամկետ օգուտներ
Ծրագրի արժեք՝	80,000 ԱՄՆ դոլար	132,790 ԱՄՆ դոլար
Էներգախնայողություն՝	225 ՄՎտժ/տարի	631 ՄՎտժ/տարի
CO_2 խնայողություն՝	54 տոննա/տարի	153 տոննա/տարի
Հետգնման ժամկետ՝	5 տարի	5 տարի



GEFF-ի ֆինանսավորումից օգտվելու համար Ձեր քայլերը՝

I. Ընտրե՛ք Ձեր բիզնեսին անհրաժեշտ տեխնոլոգիան՝ բարձր արդյունավետությամբ **Կանաչ տեխնոլոգիաների ցանկից** **techselector.com/armenia** կամ շուկայի այլ առաջարկներից

II. Ամփոփե՛ք **Ձեր ներդրման տեխնիկական և ֆինանսական պահանջները**

III. Դիմե՛ք **GEFF-ի Գործընկեր ֆինանսական կառույց (ԳՖԿ)** ֆինանսավորում ստանալու համար **ebrdgeff.com/armenia/am/financing**

IV. Անհրաժեշտության դեպքում, ստացե՛ք **անվճար խորհրդատվություն և նախագծի գնահատում** GEFF-ի փորձառու մասնագետների կողմից

V. Ստացե՛ք **ֆինանսավորումը վարկի կամ լիզինգի միջոցով**

VI. Ներդրե՛ք **տեխնոլոգիան**

VII. Օգտվե՛ք **էներգիայի խնայողությունից,** և որոշ դեպքերում նաև այլ **ֆինանսական օգուտներից***

* Բիզնեսի սեփական կարիքները բավարարելու նպատակով իրականացված վերականգնվող էներգիայի ներդրումները կարող են ստանալ պարգևավճար՝ վարկի գումարի 20%-ի չափով: Պարգևավճարի համար նախատեսված ֆոնդը տրամադրվել է Կլիմայի ներդրումային ֆոնդերի (CIF) «Ավելացնելով վերականգնվող էներգիայի ներդրումները» (SREP) ծրագրի շրջանակներում: Մանրամասները հասանելի են **ebrdgeff.com/armenia/am/grant-support** էջում:

Միրով պատրաստ ենք պատասխանել Ձեր բոլոր հարցերին:

GEFF-ը Հայաստանում
ՀՀ, ք. Երևան | Հանրապետության 62 փողոց, բն. 101
armenia@ebrdgeff.com | +374 10 542 721 | www.ebrdgeff.com/armenia